

**ԱՐԺԵՔԱՎՈՐ ՎԱՎԵՐԱԳԻՐ  
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(ՄԵԽՐՈՊ ԱՐՁԵՊԻԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՑ  
ՆԱՄԱԿԸ ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՆ)

1920-ական թվականները Հայ Եկեղեցու բազմադարյան պատմության ամենաբարդ և ծանր ժամանակաշրջաններից են: Վերջին մի քանի տարիներին որոշ փորձեր են կատարվել այդ թվականների Հայ Եկեղեցու պատմության վավերագրերը հրատարակելու<sup>1</sup> և առանձին ուսումնասիրություններ գրելու<sup>2</sup> ուղղությամբ: Այսուհանդերձ, նեռևո բավականին աշխատանք կա կատարելու, և թեման սպասում է իր անկողնակալ ու ներհուն ուսումնասիրողին: Այս առումով յուրաքանչյուր նորահայտ վավերագիր մեծ հետաքրքրություն է ներկայացնում և արժանի է առանձնակի վերաբերմունքի: Այսու ներեցող ների ուշադրությանը ենք ներկայացնում Հայ Եկեղեցու ականավոր գործիչներից մեկի՝ Մեսրոպ արքեպիկոպոս Տեր-Մովսիսյանի (1865-1939)<sup>3</sup> պրոֆ. Ն. Աղոնցին ուղղված նորահայտ նամակը, որը թվագրված է հենց 1920-ական թվականների կետով:

Մեսրոպ արքեպոս. Տեր-Մովսիսյանը տարբեր տարիներ եղել է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ, Էջմիածնի մատենադարանապետ, Վրաստաճի, Աստրախանի և Պարսկա-Ռմադկաստանյան թեմների հոգևոր առաջնորդ, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ: Նա դասավանդել է Գևորգյան ճեմարանում, հանդիսացել Հայաստանի համալսարանի հիմնադիրներից, եղել պատմագրական ֆակուլտետի պրոֆեսոր և առաջին նեկան: Նշանավոր և ամերկնելի է նաև նրա հայագիտական ժառանգությունը, որը հիմնացներ, զարմանք և պատկառանք է պատճեռությանը: Հատկապես նշելի է նրա հետինակած՝ ամբողջ աշխարհի հայերեն ձեռագրերը ներկայացնող «Հայերեն ձեռագրերի ընդհանուր ցուցակ» անտիա մնացած վիթխարի աշխատությունը<sup>4</sup>:

<sup>1</sup> Հատկապես կառամձնացնեինք բազմարդյուն Ս. Բերբույամի աշխատասիրությամբ լուս տեսած Հայ Եկեղեցու այդ շրջամի պատմությանը վերաբերող հատորաշարը՝ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» (1921-1938 թթ.), Խատ. Ա., Երևան, 1994, Խատ. Բ. «Խորհն Ս. Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց», Երևան, 1996, Խատ. Գ. «Արտակ Խաչիկոպոս Մարտիրոսյան (Տառշեցի)», Երևան, 1997: Տե՛ս Աս. Ս. Մանուկյան, Հայ Սովորելական Եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ -ի իտապաթեյների), Երևան, 1997:

<sup>2</sup> Ստ. Մտեփանյանց, Հայ Սովորելական Եկեղեցին ստայինյան բռնադատության օրոք, Երևան, 1994 և այլն:

<sup>3</sup> Մեսրոպ արքեպոս. Տեր-Մովսիսյանի կնքագրության և հայագիտական վաստակի ընդհանուր

1920-ական թվականների սկզբներին խորհրդային կառավարության վարած հետևողական հականելեցական քաղաքականության պատճառով Ս. Էջմիածինը և ընդհանրապես Հայ Եկեղեցին հայտնվեցին չափազանց անմշիթար վիճակում: Դրույթումն էլ ավելի էր բարդանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի (1912-1930) խոր ծերությամ և բազմից կրկնվող հիվանդությունների պատճառով: Կաթողիկոսական իշխանության թուլացումից անմշապես փորձեցին օգտըվել Եկեղեցական զանազան «քարենորդչական» հոսանքները, որոնք պետական հովանավորությամբ Էջմիածնից սկսեցին խել Արա Եկեղեցիներն ու մատումները, անգամ փորձեցին Աերթափանցել Մայր Աթոռ և Սինոդ: Այս ճակատագրական պահին է, որ Մայր Աթոռի վեց առավել հեղինակավոր արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ կաթողիկոսին առաջարկում են ստեղծել Գերագույն Հոգեւոր Խորհուրդ, որը միասնաբար կվարեր կաթողիկոսարանի գործները և միասնաբար կընդդիմանար Աերքին և արտաքին բռնաճնշումներին:

Հրատարակվող նամակը, որ շոշափում է այս խնդիրները, հասցեագրված է նշանավոր պատմաբան, Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Նիկողայոս Աղոնցին (1871-1942): Ն. Աղոնցը իր գործութեության տարբեր շրջաններում միշտ էլ մոտ է կանգնած եղել Հայ Եկեղեցուն: Երկար տարիներ շարունակ նա եղել է Ս. Պետերբուրգի Հայկական Եկեղեցական խորհրդի անդամ ու ապա՝ նախազահ: Բազմից նյութապես օժանդակել է Գևորգյան ճեմարանի, Մայր Աթոռի, Երևանի և մյուս թեմական դպրոցների գործութեության<sup>4</sup>: 1920 թ. գարնանից հայտնվելով վտարանդիլության մեջ, նա գործուն մասնակցություն է ցուցաբերել փարիզահայ Եկեղեցական կյանքին, հնարավորության արհմաններում աշխատել է օգտակար լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, միշոցներ հայթայթել Արա Փիմանսական անմշիթար Վիճակը ինչ-որ չափով թերթացնելու համար: Անմասն առաջարկությամբ է, որ Ն. Աղոնցը դիմել է Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանին, որի պատասխանն է հրապարակվող սույն վավերագիրն է:

Նամակի բնագիրը, որ պահվում է Բեյրութի Համազգայինի գրական պահոցում գտնվող պրոֆ. Ն. Աղոնցի թողողուում (պահարան I, գլուց Ե, Ա-8), հրապարակվում է առանց միջամտությունների: Անհրաժեշտության դեպքում մեր կողմից լրացվածքաներն առնվազ են < > մեջ:

## ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ակարագիրը տրված է Գ. Տեր-Վարդանյանի «Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան» արժեքավոր աշխատության (Երևան, 1999) մեջ:

<sup>4</sup> Ն. Աղոնցի գործութեության այս և մյուս կողմերի, Արա Բայագիտական մմայուն վաստակի արժեքավորություն տես' մեր «Նիկողայոս Աղոնց» ուսումնասիրության մեջ («Նիկողայոս Աղոնց, Հայկական Բարց», Երևան, 1996, էջ 5-24):

1925 թ. 2 յունիսի  
ի Ս. Էջմիածին

### Սիրելի Աղոնց,

Քանի՞ տարիներ են անցել: Նամակդ անակնելալ էր եւ ինձ յուգեց: Մերունի-  
ներս<sup>1</sup>, մանաւանդ մեր կացութեան, ապրում են յիշողութիւններով: Զէ՞ որ մեր  
կեանքն արդէն անցեալին է պատկանում: Քո նամակը յիշողութիւնների շարան ա-  
ռաջ քերեց: Քո մասին տեղեկութիւններ ունեի. «կարծն», «զետ եմ», «տեսել եմ» եւ  
ահա քո նամակը. կատարեալ հասատիացում Աղոնցը ապրում է Պարիզի լաւա-  
գոյն թաղում<sup>2</sup>, քաջառողջ է, կապած զիտութեան հետ<sup>3</sup> եւ մտահոգած է մեր հինա-  
տուր հիմնարկութեամ վիճակով<sup>4</sup>: Անհամբեր կը սպասեմ, թէ երբ պիտի գրես  
զրադունքներիդ մասին<sup>5</sup>:

1 Նամակի գրության պահին Մերունի արքեպոս. Տեր-Մովսիսյանը 60 տարեկան էր:

2 1920-ակամ թվակամների առաջին կեամ Ն. Աղոնցը Փարիզում բնակվում էր նախ Montmartre և  
ապա՝ Colonel թաղամասերում (տե՛ս Վիենայի Սխիթարյանների դիվան, Ն. Աղոնցի ֆոն, Ն.  
Աղոնցի նամակը հայր Ն. Ակինյանին և այլոց): Հետաքրքիր է մշտ, որ Ավ. Խաճակյանը կնօշը՝ Սոֆյա  
Խաճակյանին 1926 թ. փետրվարի 25-ին հողված նամակում հարկ է համարել շեշտելու, թե ծանոր շատ  
հայերի տները «ծակեր են, մութ, զգվելի»: ... Լավ տում ումի Աղոնցը (տե՛ս Ա. Խաճակյան, Երկորի  
ժողովածու Բ հատորով, հատ. 6, Երևան, 1979, էջ 225):

3 Տարագրության առաջին տարիներին (1922-1925 թվակամներին) Ն. Աղոնցը հրապարակում է «Քրիերի Անդամականությունը Հայաստան անզերեն հովված» (տե՛ս «The New Armenia», New York,  
1922, vol. 14, № 1, էջ 4-6), «Հայոց Եկեղեցու Հայամավորություն» [տե՛ս «Revue de L' Orient Cretien» (=  
ROC), Paris, 1924 և IV (XXIV), էջ 211-218], «Ա. Գրիգոր Լուսավորիչի հարցումը և նզմիկը» [տե՛ս Առյան  
տեղում, Paris, 1925-1926, և V (XXV), էջ 309-377 (առանձին մենագրությամբ՝ Փարիզ, 1927)] ֆրամսերեն  
ուսումնասիրությունները, «Մաշտոց և Արա աշակերտները ըստ օտար աղյուրների» մենագրությունը  
(Վիենա, 1925), «Բամական նշանակություն Եգմիշի մասին» հոդվածաշարը (տե՛ս «Բազմավեպ», 1925, էջ  
196-200, 294-298, 366-371, 1926, էջ 69-72, 108-113) և այլն:

4 Ականակը Վերաբերում է Մայր Աթոռին և ընդհանրապես Ս. Էջմիածնին: 1923-1925 թթ.  
Փարիզում բնակվող մի խումբ ազգային-մշակութային գործիչներ (Ավ. Անհրաժեշտ, Ն. Աղոնց, Ար.  
Ղուկասյան, Ա. Վրացյան, Ա. Հանրման և ուրիշներ) համձախումբ են ստեղծում Մայր Աթոռին Փի-  
անանական օժանդակություն ցույց տալու նպատակով:

5 Այդ շրջանուն Ն. Աղոնցի գիտական հիմնական զրադունքների արդյունքների մասին կարող են  
գաղափար տալ «Հայրենիք» ամսագրի 1926-1927 թթ. համարներում տպագրված «Հին Հայոց աշխար-  
հայացը», «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», 1927 թ. «Համես ամսօրեա»-ում լուս տե-  
սած «Կորյունի մասին» հոդվածաշարը ու հատկապես «Հայոց Եկեղեցու տոներն ու սրբերը» Փրամսերեն  
ծավալում ուսումնասիրությունը (տե՛ս ROC, 1927-1928, և VI (XXVI), էջ 74-104, 225-278):

Նամակի կիսապաշտօնական է: Մտացւած երեկոն հաւաքւեցինք՝ Խորէս<sup>6</sup>, Մեսրոպ<sup>7</sup>, Բագրատ<sup>8</sup>, Գարեգին<sup>9</sup> և Գիւլ<sup>10</sup> եպիսկոպոսերովս (Զաւէն Սրբազնը<sup>11</sup> մայիսի 18-ի գիշերը կաթուածահար մեռաւ), Գերազոյն Խորիրդի<sup>12</sup> անդամ-

<sup>6</sup> Խորեն արքեսիսկոպոս Մուրադելկյանին, Բետազոյում Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա. (1873-1938), եղել է Սրբարատյան Բայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ (1908-1924), Հայրապետական լիազոր Թերլայացուցիչ (1921-1930), Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ (1923-1930), միաժամանակ՝ Գերազոյն Հոգևոր Խորիրդի մախագարող և լուսարարապետ: 1930 թվականից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս:

<sup>7</sup> Խոսքը Վերաբերում է Մեսրոպ արքեպոս. Տեր-Մովսիսյանին:

<sup>8</sup> Բագրատ արքեպիսկոպոս Վարդապարյան (1869-1938), եղել է Պարսկա-Բնողկաստամյան թեմի առաջնորդ (1901-1910), Գևորգյան ճնմարամի վերատեսուց (1910-1914), Ծամախութ թեմի առաջնորդ (1916-1921), Հոգևոր Սիմոնի մախագար (1924-1928): Ամենին բռնադատվել ու գնակահարավել է 1938 թվականին [տե՛ս Ս. Մանուկյան, Հայ Առաքելական Եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թվ. (ըստ ՊԱՀ-ի փաստաթերթի), էջ 50-59]:

<sup>9</sup> Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփիան, Բետազոյում Մեծի Տաճա Կիլիկի Կաթողիկոս Գարեգին Ա. (1867-1952), եղել է Ս. Էջմիածնի վամբի մատենադարամանաւ (1896-1906), Գևորգյան ճնմարամի վերատեսուց (1905-1906, 1916-1917), «Արարատ» ամսագիր խմբագիր (1901-1908, 1918-1919), Ղրիմի և Նոր Նախշինամի թեմի առաջնորդ (1927-1934), Եվրոպայի Հայրապետական պատվիրակ (1934-1938), Ամերիկայի թեմի առաջնորդ (1938-1943), Մեծի Տաճա Կիլիկի Կաթողիկոս (1943-1952):

<sup>10</sup> Գյուտ Եկեղեցու Տեր-Ղազարյան (1877-1927), եղել է «Արարատ» ամսագիր պատասխանատու խմբագիր (1916-1918), Եղայրական օգնության Գլյախպոր կարգադիր Բանձնաժողովի փոխնախագար (1916-1917), Մայր Աթոռու տպարամի վարչության մախագար (1917-1919), Մայր Աթոռու դիվանապետ, Գերազոյն Հոգևոր Խորիրդի ամենա (1924-1927): 1927 թվականի հուլիսի սկզբներին Պետքադարչությունը քաղաքական անհիմ մեղադրամներով ձերբակալ է Արամ, բայց մի քանի օր անց, հուլիսի 18-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջնորդությամբ ազատ է արձակվել [տե՛ս «Վաշերազներ Հայ Եկեղեցու պատմության (1921-1938 թվ.), կազմեց Ս. Բերբույսան, էջ 116]: Սակայն դեկտեմբերի 1-ին խորիրդավոր պայմաններում մահացել է Վամբի իր բնակարանում: Ենթադրվում է, որ Արամ սպանել են հատուկ ծառայությունների գործակալները (տե՛ս Ստ. Ստեփանյանց, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինան բռնադատության օրոր, էջ 59-61):

<sup>11</sup> Զավեն Եպիսկոպոս Բարձրական (1876-1925), եղել է Ղարաբաղի թեմի առաջնորդ, Ս. Հոկիսիմն վամբի Վաճառքայր (1917), Կարիմի, Դերջանի և Երզմկայի հոգևոր տեսուց (1917-1918), Գերազոյն Հոգևոր Խորիրդի ամենա (1924-1925):

<sup>12</sup> Խոսքը Վերաբերում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի մախագարության մերքը գործող Հայոց Բամանեկենեցական-Վարչական բարձրագույն մարմնին՝ Գերազոյն Հոգևոր Խորիրդին: Այն ատեղծվել է Գևորգ Ե Կաթողիկոսի 1924 թ. հունվարի 1-ի Կոնդակով՝ «Գերազոյն Հոգւնորդ» Խորիրդի Հայոց Սուրբ Էջմիածնի կազմեալ կայ սնդ մախագարութեամբ Մերով ի վեցից փորձառու արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց (տե՛ս «Վաշերազներ Հայ Եկեղեցու պատմության», գիրք Բ, կազմեց Ս. Բերբույսան, էջ 166-167): Հետաքրքիր է, որ Խորիրդային Հայաստանի կառավարությունը և Բատուկ ծառայությունները չափազանց բացասաբար են Վերաբերվել Գերազոյն Հոգևոր Խորիրդի գործունելությանը, որի ապացույք կարող է լինել ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի մախագար Ա. Կարիմյանի «Գերազոյն Խորիրդը Խորիրդային Հայաստանի դեմ» գրաբարտչական եղույթը (տե՛ս «Խորիրդային Հայաստան» օրաթերթ, Երևան, 1927, էջ 217): Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն ստիպված է եղել 1927 թվականի հոկտեմբերի 7-ին հատուկ բողոք-ներքում հոգել ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեին, որտեղ շեշտել է, թե

Աերով, կարդացինք և երկար վշտացած եւ մասամբ դառնացած գրուցնցինք: Ինք- Ահաւամութիւնը արատ է, հաւաքածներս ազատ չենք այդ արատից, վշտացած հարցում էինք, մի՞թէ այդ հինգ ամումները, թէ՝ իրեն անհատներ, թէ՝ մանաւանդ համերաշխ մի խորհրդի մէջ համախմբած, ի վիճակի չեն պատար եւ պատճէշ լի- նելու ամենատեսակ յարձակումների եւ զրախօսութիւնների դէմ: Մարդիկ ցանկա- նում են օգնել Էջմիածնի վաճրին, բայց կաևսած կայ, թէ ինչպես ամեն: Քանի որ քո միջոցով Աերկայ վարչութեան ձեւի մասին նոր տեղեկութիւններ են պահանջում եւ հաւատացած, որ այդ տեղեկութիւն պահանջողները, անշուշտ, Հայոց Եկեղեցու բարեկամներ են, գործ Էջմիածնի վերջին տարիների անցուդարձի համառօտ պատմութիւնը, իմանալով, որ ասածներս նորութիւն չեն լինելու:

Նորընծայ Գրիգորիս Սրբազնը<sup>13</sup> ամիսներ ապրեց մեր մէջ, Էջմիածնի նախ- կին վիճակին քաջածանօթ, իր պատրաստութեամբ եւ ազատ որեւէ կամսակալ կարծիքներից, պէտք է բաւարարէր ամենքիդ: Նոր բան չպիտի ասեմ. նամակս թե- րի է մանալու: Իրական կացութեան լաւագոյն նկարագրութիւնը լսեցէք Գրիգորիս Սրբազնից:

Մօտ երկու տարի առաջ<sup>14</sup>, հեռում չգնամ, կաթողիկոսը ծանր հիւանդացաւ: Միաբանութիւնը իր ունեցած վերջին դրամը ծախսեց նրա ապաքինման համար: Կաթողիկոսի հիւանդութիւնը, նրա ութունմամետայ հասակը<sup>15</sup>, ցարական Պոլոտններ- այի<sup>16</sup> ոչնչացումը, մի քանի ներքին եւ արտաքին ծանր պատճառներ<sup>17</sup> Եկեղեցու

«Էջմիածինը իր նկեղեցական-վարչական կազմակերպությամբ, հատկապես իմ նախազարդության ներքո գործող Գերագովն Հոգևոր Խորհրդող չի նեղի երթեր Խորհրդային Հայաստանի դեմ, այլ ընդհակառակը, միշտ եղել է և օրինապահ, կորեկտ և բարյացակամ Խորհրդային Հայաստանի և մեր կառավարության վերաբերմամբ» [«Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» (1921-1938 թթ.), էջ117]:

<sup>13</sup> Գրիգորիս Խափիկոպս Պալարյան (1879-1934), նոել է Կ. Պոլսի պատրիարքարամի քարտուղար, Մամիչստիք, Լոմբոդի և Մարսելի հոգևոր առաջմորդ: Եվրոպայի Հայոց հայուսնետական պատվիրակ:

<sup>14</sup> Այսինքն՝ 1923 թվակամին:

<sup>15</sup> Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը ծնվել է 1847 թվակամին, հետևաբար՝ 1923 թվակամին առ 76 տարեկան էր:

<sup>16</sup> Պոլոտններ - Ռուսաստանամ կայսրության տարածքում Հայ Եկեղեցու կամունադրությունը: Հաս- տատվել է 1836 թվակամին և գործել մինչև 1917 թվակամի վերջնը:

<sup>17</sup> Նկատի ունի 1922-1923 թվակամներից Հայ Եկեղեցի ներյափամցած «Ազատ նկեղեցական եղ- բարյություն» շարժումը, որի նեկավարներ էին Բնակի վարդապետ Եղիազարյանը, Մեսրոպ ավագ քամանա Մայլանը և ուղիշներ: Շարժումը նովամապիրովում և ֆինանսավորվում էր Խորհրդային Հա- յաստանի հատուկ ծառայությունների կողմից: Նրանք հրատարակում էին «Ազատ Եկեղեց» շարթա- թերթը (1924-1928): Իշխանությունների նովամապիրությամբ ազատ նկեղեցակամները Երևանում, Թիֆլիսում և այլուր զավթեցին մի շաբաթ նկեղեցիներ, որտեղ իրենց անշատողակամ զաղափարներն էին տարածում հավատացյալ ժողովորի մեջ: 1926 թ. հունիսի 14-ին Գևորգ Ե Կաթողիկոսը հատուկ

կացութիւնը ամտանելի էին դարձրել: Զկար Սինօդ<sup>18</sup>, դիաճը կառավարում էր գրագիր Արմենակի (Երեխ յիշում ես Օրան) և մի շաքիրի ձեռքով: Երկու փորձ եղան կացութիւնը բարտքելու: Բժիշկները լայտարարեցին և գրատը տիհն եպիսկոպոսներին, որ կաթողիկոսի հիւանդութիւնը վտանգաւոր է, որ Օրան բոլոր գործերից հեռու պիտի պահել, երկար ժամանակ՝ նաև առողջանալուց յետոյ: Եպիսկոպոսներս խորհրդակցութեամբ Խորէն արքեպիսկոպոսին տեղապահ<sup>19</sup> ընտրեցին<sup>20</sup>, Բագրատ, Գարեգին և Գիտու եպիսկոպոսներին անդամներ Սինօդի: Բոլորին մերկայութեամբ, իս միջնորդութեամբ, կաթողիկոսը անկողմու մէջ համաձայնեց և ստորագրեց համապատասխան Կոնդակներ: Երկու ամիս անց՝ 1923 թ. ապրիլին, հիւանդը լաւացաւ, ի մեծ ուրախութիւն միաբաններին և մինչդեռ սպասում եւ հաստում էինք, որ լաւագոյն կազմի խորհրդակցութեամբ և գործակցութեամբ գործերն առաջ կ'տարին, ծերունի կաթողիկոսը այդ անհնար դարձեց և քառային դրութիւնը աւելի ծավալեց: Նոյն տարուայ վերջը երկու-երեք ամիս անդիան նոր խորհրդակցութիւններ գումարեցինք, մասնակցութեամբ բոլոր միաբանների (չեր հրավիրում միայն նախակին Բենիկ Վարդապետը<sup>21</sup>): Եզրակացութիւնն էր՝ Ընդհանուր եկեղեցական <համա> գումար հրավիրեցը հժար է. Եկեղեցին այդ վիճակում պահել անհնար. կազմել մի Հոգևոր Գերագոյն Խորհրդութ՝ կաթողիկոսի նախագահութեամբ, որ Վարի Եկեղեցու բոլոր գործերը՝ կաթողիկոսի հրատարակած Կոնդակով հաստատուած: Համագանձների պատճառով աշխարհական կարող<sup>\*</sup> անդամներ հարաւիրել չէինք կարող, ուստի <որոշեցինք> ժամանակաւորապէս բաւականանալ միայն եպիսկոպոսների կազմով. պարտաւորացնելով, որ նոցանից և ոչ մէկը հրաժարվելու իրաւումը չունենայ: Այս միակամ և միաձայն որոշումն ինձ յանձնարարւունց ծանօթացնել կովկասահայ առաջնորդներին և քաղաքների սակաւաթի ազգային-եկեղեցական խմբիրներով նետագրքըրուող հայ մարդկանց և ստանալ նոցա հաւանութիւնն ու կարծիքները: Եպիսկոպոսական կազմը,

Կոնդակով «Ազատ եկեղեցական եղայրությունը» հայտարարն Հայ Եկեղեցուց ամջատված և նզովնց այն, իսկ Բենիկ Վարդապետին էլ կարգալով արեց:

<sup>18</sup> Սինոդ - Ամենայն Հայոց կաթողիկոսին կից բարձրագույն հոգևոր ամձանց եկեղեցական-խորհրդակցական մարմին, որ ստեղծվել է «Պոլոտնեմին»-ի համաձայն (1837 թ.): Վերացվել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո:

<sup>19</sup> «Եիշուն՝ Հայուսպանտական տեղակալ-ն:

<sup>20</sup> Խորեն արքեպիսկոպոս Մուրադեկլյան Հայրապետական տեղակալ է ընտրվել 1923 թ. մարտի 4-ի կաթողիկոսական Կոնդակով: Նովս Կոնդակով նա ծշամակվել է Ս. Սինոդի նախագահու (տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Բ. Խորեն Ա. Մուրադեկլյան կաթողիկոս Ամենայն Հայոց, էջ 152):

<sup>21</sup> Բենիկ Վարդապետ Եղիազարյան (1867-1948), եղել է Ղարաբաղի թեմական դպրոցի տեսուչ (1899-1903), Գանձակի առաջնորդական փոխանորդ (1903): «Ազատ եկեղեցական եղայրության» պարագաներից (տե՛ս նաև ծառ. 17):

\* Ընդգծումը նամակագրին է (Պ. Հ.):

ունենալով վաերացրած թղթերը, մերկայացաւ, 1924 թ. յունվարի 1-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ խնդրեց իր համաձայնութեամբ վաերացնել այդպիսի մի նոր մարմին. այլապէս միաբանութիւնն իրան անպարտ կ'ճանաչի:

Կաթողիկոսը համաձայնեց և հրատարակեց առ այդ 1924 թ. յունվարի 1-ի համար՝ 1 Կոնդակը<sup>22</sup> եւ գործավարութեան հրահանգ: Հարկ եմ համարում քեզ գրելու, որ համաձայնութիւնն առանց դժկամութեան չէր, որ մինչեւ օրս էլ արտայայտում է որոշ բանասանքների ձեռվ և պատճառ ծառալում անիրազէկ և յաճախ չարամիտ անձանց կողմից յարձակելու կամ քննադատելու Գերագոյն» Հոգքնոր» Խորհրդողը: Մտքերի շփոթութիւնը ծառալում է բնիկների, զնելների<sup>23</sup> և նմանների շանթերով, որոնց շահատակութիւններն անհնար էին աստիճանաբար կարգի տակ մտնող եկեղեցական հիերարխիայի մէջ և որոնք իրենց կեանքով ու գործունեութեամբ հանրածանօթ, իբրև բացասական տիպեր, կերծում են նոր և ազատ Եկեղեցու<sup>24</sup> հիմնարդի ներ հանդիսանալով: Գերագոյն Խորհրդի ամեն մի անդամ լաւապէս գիտակցում է, որ այդ անձանց եղոյթը բաւական վնասում է թէ՛ անհատներին և թէ՛ մեր հիմնարկութեանը, բայց վիճե՞լ այդպիսիների հետ. ո՞ւմ ուրախացնելու և ո՞ւմ միամտացնելու:

Սիրեկի Աղոնց. Բայ Ժողովրդի անմկարագրելի տանջանքներին լիովի մասնակից է եղել Հայ Եկեղեցին և այդ բոլոր տանջանքներից հետոյ, մեր Ժողովրդին ու Եկեղեցու բաժին է մասցել իր աւերած և բրիշակ դարձած հայրենիքի մի բնկորը: Խեղճութեան մէջ ընկած մարդուց բոլորն են հաշիր պահանջում, և ամեն ոք իրաւունք է համարում նրան քննադատելու: Մեզ կամենում են օգնել, բայց նախապէս կամենում են իրազէկ լինել, թէ հարուստի փշրանքները աղքատը ի՞նչ կան: Կուտիի՛: Ո՞մ կարող ես՝ հաւաստիացրու, որ Գերագոյն» Հոգքնոր» Խորհրդի միջոցով ամեն մի օգնութիւն լաւագոյն եղանակով կ'գործադրի և, որ այս պայմաններում Գերագոյն» Խորհրդի շնորհի Հայոց Եկեղեցին կառաւարում է աւելի լաւ, քան կաթողիկոսի միահնեծան կամքով, կամ ցարից հաստատած Սինօդի միջոցով: Սա է իրողութիւնը:

P. S. Թաճախ լինում եմ Երեւանում: Երեկ այնտեղ էի և ազատ ժամանակ ունեմ: Կարքով պտտեցի քաղաքի զանազան մասերը: Խ'նչ քաղաք. անքակների մի կոյտ՝ տեղ-տեղ ցցած կանգուն տներով: Բայց չնայած այդ բանին ոգեստրութիւնն իմ հա-

<sup>22</sup> Տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմությամ», գիրք Բ. Խորեն Ա. Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց, 166-167:

<sup>23</sup> Զկարողացանք պարզել ով լինելը: Թերևս ակնարկում է Գնել եախսկոպս Գալեմքեարյամին: Արմաշի դպրուամբի շրջանավարտ (1890 թ.), նղել է Մուշի և Սեբաստիայի թնմերի առաջնորդ: Այցելու հոգևոր նովիկ Խումիկիայի հայոց: Հարել է և տուրք տվել «Ազատ Եկեղեցակամ եղբայրությամը»:

<sup>24</sup> Տե՛ս ծառ. 17:

սակին անհամապատասխան չափեր էր ընդունել: Գերմարդկային ճիզեր և թափում նոր քաղաք շինելու, եւ երբ նա գլուխ բանի, իսկ այդ անպատճառ Կ'լիմի, բայց ստեղծագործական եռանդի լաւագոյն կորողը Կ'լիմի: Մրջիմի աշխատափրոթեամբ գործն առաջ է տարրում և շոշափելի կերպով տեսնում եւ բամոզում էի, որ արտասովոր է հայի եռանդի չափը: Պարիզի մեծ փողոցներից մեկում մի հայ, գրում են, 11.000.000 ծախսում է մի տուն շինելու, որպեսզի մէջը բախտաւոր ապրի: Երեւակայիր, Աղոնց, այդ հայը քայլ, արթնանար եւ վճռէր, թէ ես ցանկանում եմ իմ ժողովրդով բախտաւոր լինել, եւ նա իր մի տաճ զնով, հազարաւոր տներ եւ ընտանիքներ կ'բախտաւորացներ: Խնչո՞ւ մարդկային միտքը այդքան տարրական տրամաբանութեան չի ჩետեսում: Նամակին յաւելածն աւելացրի, որովհետեւ վերջի հայակործան պատերազմից յետոյ<sup>25</sup>, երեկ, առաջին անգամ, արտասովոր հաւատիցումով վերադարձայ Էջմիածնի վաճքը, թէ հայը պիտի ապրի եւ նոր խօսք պիտի ասի մարդկութեանը:

Փոտով ուղարկում եմ ուզած գրեերը՝ «Ծիմոթէոս Կուզ»<sup>26</sup> և «Կմիր հաւատոյ»<sup>27</sup>: Իբրև նորութիւն քեզ հաղորդեմ. Էջմիածնի ձեռագրերը Մոսկվայից<sup>28</sup> բերուած էին Երեւան<sup>29</sup> և մի տարի առաջ՝ Էջմիածնի մատենադարան: Այս մայսին ամսին կմքած արկելերը՝ 10 տարի փակ մնալուց հետոյ, բացւեցին եւ միանգամայն անվճառ դասաւորեցին իրենց երկաթե պահարաններում: Ձեռագրերի քանակն է 4.660<sup>30</sup>, չհաշտած պարսկերէն ձեռագրերը, իսկ նորագոյն ժողովածուն պարունակում է 1.930 օրինակ: 1.050 օրինակ էլ գտնում են Երեւանի թանգարանում, որ դարձեալ պիտի բերին, ընդամենը՝ 7.640 ձեռագիր: Արդեռո՞ք հնար չէիր ունենալ մի 2000 ուրիշ նույն գոտել, որ երկաթե պահարանների պակասը շինել տայինք: Իմ շինել տուած պահարանները դժբախտաբար չեն բաւարարում: Այս էլ քեզ գրեմ, որ

<sup>25</sup> Սկափի ումի Սուուշին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.):

<sup>26</sup> Տե՛ս «Ծիմոթէոսի Հակաճառութիւն առ սահմանեալն ի ժողովում Քաղկեդոնի»: Ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վլոր-ի և Երուամի վարդ-ի, Էջմիածնի, 1908:

<sup>27</sup> Տե՛ս «Կմիր հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցոյ յուղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յարուս Կոմիտաս Կաթողիկոսի համարաւոքնեալ»: Հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածնի, 1914:

<sup>28</sup> Էջմիածնի ձեռագրերը և Մայր Աթոռի թանգարանի գույքերը Մոսկվա էին ուղարկվել 1915 թ. փետրվարին: Ձեռագրերի ողիսականի մասին տե՛ս Ա. Սիմոնյանցի ուշագույն հոդվածը՝ «Էջմիածնի թամկարժեք ձեռագիրները Առաջին մեծ պատերազմի ընթացքին» («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1966, № 6, էջ 70, հմտ. մաս «Հայրենիք», 1946, № 4, բովիս-օգոստոս, էջ 86-87):

<sup>29</sup> Ձեռագրերը Երեւան են հասել 1922 թ. մայիսի 10-ին:

<sup>30</sup> Էջմիածնի բոլոր ձեռագրերը դեռևս 1912 թվականին մի միասնական համարագրությամբ դասավորել էր իմքը՝ Մերուոց առենաւ: Տեր-Մովսիսյանը՝ Թվովն է, թէ այստեղ նա հիշողությամբ է երկայնացնում ձեռագրերի քանակը, իրականում դրանց թիվը էր 4.586 (տե՛ս Գ. Տեր-Վարդամյան, Օչզ. աշխ., էջ 11):

մատենադարանը կառավարում է պետական պաշտօնեաներով<sup>31</sup>, և մենք սուլական այցելումեր ենք: Բայց ինչ որ կայ Հայաստանում և ինչ որ շինում է այնտեղ, հայ մարդու համար է և այդ պարզ գիտակցութիւնը պիտի ունենայ օտարութեան մէջ գոնուղ ամեն մի հայ:

Համբուրիի բարեւմեր քեզ ու բազմաթիւ ծանօթմերի:

Մեսրոպ արք<եակիւկոպոս>



<sup>31</sup> Այդ թվակամմերին մատենադարանի տնօրենն էր Ճեռագրագետ, բանասեր Ս. Տեր-Հակոբյանը (1881-1938):